

Կ-110-03.10.2012-ՍՀ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԵԿԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246 օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) «Ձինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-36-րդ հոդվածների համաձայն, զինժառայողներին և նրանց հավասարեցված անձանց մատուցված ծառայությունները կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները, ինչպես նաև պարտադիր ծառայության զինժառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,
 «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու
 մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և
 փոփոխություն կատարելու մասին», «Փրկարար ծառայության մասին»
 Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քրեակատարողական ծառայության
 մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Դատական ակտերի
 հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հան-
 րապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ
 ներկայացված առաջարկությունների**

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով վերախմբագրվող՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում լրացնել «, ինչպես նաև պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով վերախմբագրվող՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «զինծառայողներին» բառից հետո լրացնել «և նրանց հավասարեցված անձանց» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծով լրացում կատարել «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում՝ ամրագրելով, որ ծառայության նոր վայր տեղափոխվելու և միանվագ դրամական օգնությունների չափերը հաշվարկելու համար պաշտոնային ու զինվորական կոչման դրույքաչափերը որոշվում են ՀՀ կառավարության	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

	կողմից սահմանված պաշտոնային ու զինվորական կոչման դրույթաչափերի ու դրանցից պահված եկամտային հարկի տարբերության չափով:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով (լրամշակված տարբերակում` 2-րդ հոդվածով) վերախմբագրվող` «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում «ծևով ստացված եկամուտները» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով (լրամշակված տարբերակում` 2-րդ հոդվածով) վերախմբագրվող` «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում «զինծառայողներին» բառից հետո լրացնել «և նրանց հավասարեցված անձանց» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: